ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՀ, ք. Երևան, 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (+ 374 10) 44-34-80, (+ 374 60) 37-26-56
Հեռ.՝ (+ 374 10) 44-29-04, (+ 374 60) 37-77-37

Ե 40/11-7723
«01» 11 2022 թ.

«ԼԱՎԵՆԴԵՐ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ՝
ԱՐՈՒՍՅԱԿ ՇԱՀԶԱԴՅԱՆԻՆ
ՀՎՀՀ 03555384
(Հասցե՝ Կոտայքի մարզ, գ.Ջրվեժ 2227, 53 հողամաս)

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության և «Լավենդեր» ՍՊԸ-ի միջև 15.12.2021թ.-ին կնքված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/7-3» ծածկագրով պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «Լավենդեր» ՍՊԸ-ն, սույն թվականի ապրիլ-հուլիս ամիսների ընթացքում, պարտավորվել էր մատակարարել քլորակիր 500 կգ քանակով, սակայն մինչ օրս մատակարարվել է 250 կգ քլորակիր:

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պատասխանատու աշխատակցի կողմից, բազմիցս բանավոր տեղեկացվել է «Լավենդեր» ՍՊԸ-ին՝ Պայմանագրով նախատեսված, բայց չմատակարարված ապրանքի մատակարարումներն իրականացնելու վերաբերյալ, ինչպես նաև 21.10.2022թ.-ին ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության գլխավոր քարտուղարի թիվ Ե-40/11-7515 գրությամբ՝ վերջին անգամ զգուշացվել էր Լավենդեր» ՍՊԸ-ին և հինգ աշխատանքային օրյա ժամկետ էր սահմանվել, որպեսզի իրականացվեր 250 կգ քլորակրի մատակարարումը, սակայն Ձեր ընկերության կողմից այդ ուղղությամբ մինչ օրս քայլեր չեն ձեռնարկվել:

Հաշվի առնելով վերը նշվածը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը, ինչպես նաև 2.1.7.1 կետի բ) ենթակետը՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը հայտնում է Ձեզ, որ **2022թ. նոյեմբերի 1-ից՝** միակողմանի մասնակի լուծում է վերը նշված

Պայմանագիրը՝ 250 կգ «քլորակիր» ապրանքատեսակի մասով, որի գումարը կազմում է **105000 (մեկ հարյուր հինգ հազար) ՀՀ դրամ:** Նշված գումարի չափով Պայմանագրի միակողմանի մասնակի լուծումից հետո՝ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/7-3» ծածկագրով պայմանագրի ընդհանուր գումարը կազմում է 574219,2 (հինգ հարյուր յոթանասունչորս հազար երկու հարյուր տասնինը ամբողջ 2 տասնորդական) ՀՀ դրամ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ «Լավենդեր» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո, 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005028106** հաշվեհամարին փոխանցել **3423 ՀՀ դրամ**՝ որպես տույժ՝ Պայմանագրի 6.2 կետի համաձայն:

Ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005000698** հաշվեհամարին ենթակա է գանձման **21000 ՀՀ դրամ՝** որպես տուգանք՝ Պայմանագրի կատարման ապահովում և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին ենթակա է գանձման **31500 ՀՀ դրամ**՝ որակավորման ապահովում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ եթե մինչև **2022 թվականի նոյեմբերի 10-ը ներառյալ** Ձեր կողմից վճարվի վերը նշված վճարման ենթակա գումարները, ապա «Լավենդեր» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարներն անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում՝ լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները ներկայացնել ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի նյութատեխնիկական ապահովման բաժին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐԱՄ ՆԻԿՈՅԱՆ

Կատարող՝ Գրիգոր Հարությունյան,
ՀՀ ԱՆ ՆՏԱ բաժինի պետ,
Հեռ.՝ 060-43-35-35